Կին և քաղաքականությունը

2012 հունվար-փետրվար

Անվճար հավելված

«64 կանանց կերպարից միայն մեկը, ում ոչ ոք չի ծեծում, չի նվաստացնում»



էջ 4

Չակատագրեր

«ՄԱԿ-կանայք» գործակալություն. առաջին տարեդարձ

Քաղաքական կյանքին կանանց լիարժեք և իրավահավասար մասնակցությունը ժողովրդավարության և արդարության հիմքն է, ժողովուրդների պահանջը: Այս մասին հայտարարել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար տեղակալ և «ՄԱԿ-կանայք»-ի գործադիր տնօրեն Միշել Բաչելետը՝ ամփոփելով իր ղեկավարած նոր կառույցի 2011-ի արդյունքները:

Նա հաղորդել է աշխարհի 52 երկրներում առաջնորդության համար կանանց շարժումներին սատարելու ծրագրերի մասին:

Հիշեցնենք, որ «ՄԱԿ-կանայք» ստեղծման մասին որոշումն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2010-ի հուլիսի 2-ին: «ՄԱԿ-կանայք» նոր կառույցը պաշտոնապես սկսել է աշխատանքը 2011-ի հունվարի 1-ին:

Մարտի 8-ն այս տարի նվիրված է գյուղաբնակ կանանց

«Գյուղաբնակ կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնում. ո՛չ քաղցին և աղքատությանը»՝ սա է 2012-ի կանանց միջազգային օրվա թեման:

«Անհրաժեշտ է գյուղաբնակ կանանց կարիքների համար միջոցներ հատկացնել: Դե յուրե և դե ֆակտո վերացնել կանանց նկատմամբ խտրականությունը: Ապահովել, որ անցկացվող քաղաքականությունը պատասխանի նրանց կարիքներին, տրամադրի նրանց ռեսուրսներին հավասար մատչելիություն, ապահովի գյուղաբնակ կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործում»,- ասվում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-Մունի ուղերձում:

Այսօր նրանք ապրում են աղքատության մեջ

Այս տարվա փետրվարի 27-ից-մարտի 9-ը Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակում անցկացվող կանանց կարգավիճակի հանձնաժողովի 56-րդ նստաշրջանի առանցքային թեման է գյուղաբնակ կանայք և նրանց դերը աղքատության և սովի դեմ պայքարում:

Գյուղաբնակ կանայք կազմում են աշխարհի բնակչության մեկ քառորդը: Նրանք ահռելի ներդրում են կատարում սննդի արտադրության մեջ, սակայն նրանց աշխատանքը շատ հազվադեպ է ըստ արժանվույն գնահատվում, նրանց հնարավորություն չի տրվում ստանալ արժանապատիվ աշխատավարձ: Այսօր նրանք կերակրում են աշխարհին, բայց ապրում են աղքատության մեջ:

It´s a Mans World

Գլոբալ մեդիա մոնիթորինգի (GMPP) 2010-ի տվյալների համաձայն՝

• 76%-ը այն մարդկանց, ում մասին լսում կամ կարդում են աշխարհի նորություններում, տղամարդիկ են

«Կնոջ կերպարը հայ մամուլում» 2011-ի հետազոտության տվյալներով՝

• 86%-ը այն մարդկանց, ում մասին կարդում են հայկական լրատվամիջոցներում, տղամարդիկ են:

«Կնոջ կերպարը հայ մամուլում». ինչպիսի՞ն է այն

Այս ուղղությամբ վերջերս կատարված հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ թեև հրապարակումների հեղինակների 67%-ը կանայք են, հայկական լրատվամիջոցներում ներկայացված անձանց 86%-ը տղամարդիկ են, և ողջ տեղեկատվական հոսքի միայն 10%-ն է հատկացված կանանց:

Հետազոտությունն իրականացրել էր «ՊրոՄեդիա-գենդեր» հասարակական կազմակերպությունը՝ ՄԱԲՀ-ի աջակցությամբ: Հետազոտությունն անցկացվել է երեք ամսվա կտրվածքով՝ 2011 թ. մարտի 1-ից հունիսի 1-ը, ինչը հնարավորություն տվեց նաև գնահատելու այսպես կոչված «կանանց միամսյակի» ազդեցությունը հասարակական կարծիքի վրա:

Ուսումնասիրվել էր վեց պարբերականի՝ երեք թերթի և երեք լրատվական գործակալության («Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Ազգ» օրաթերթեր և News.am, «A1+», «Պանորամա» լրատվական կայքեր) շուրջ 30.000 հրապարակում: Ընտրանքի հարցում որոշիչ դեր է խաղացել նախորդ հետազոտությունների շարունակականությունն ապահովելու սկզբունքը:

Ի՞նչ պարզվեց հետազոտության ընթացքում.

• Ողջ տեղեկատվական հոսքի միայն 10%-ն է հատկացված կանանց:
• Տղամարդկանց լուսանկարների թիվը 6 անգամ ավելի է, քան կանանց:
• Նյուսմեյքերները և «արտոնյալ խոսնակները» հիմնականում տղամարդիկ են՝ կանանց համեմատ 6:1 հարաբերակցությամբ:
• Փորձագիտական կարծիքը նույնպես պատկանում է տղամարդկանց՝ 8 տղամարդ փորձագետ և միայն 1 կին փորձագետ հարաբերակցությամբ:
• Գենդերային անհավասարությունը համացանցում ավելի վառ է արտահայտված, քան տպագիր մամուլում:

Դրա հետ մեկտեղ՝ ԶԼՄ-ներում ներկայացվող տղամարդկանց աշխարհը կառուցվում է կանանց ձեռքերով՝ հետազոտված պարբերականների լրագրողական կազմի 67%-ը կանայք են:

Ի դեպ, կանանց վերաբերյալ հրապարակումների հեղինակների 73%-ը կանայք են, ինչը վկայում է, որ կին լրագրողներն ավելի հաճախ են լուսաբանում կանանց հիմնախնդիրները, քան իրենց տղամարդ գործընկերները:

Հետազոտված ժամանակահատվածում առավել հիշատակվող կանանց առաջին քսանյակում հայտնվել էին 14 կին քաղաքական գործիչ, 3 մարզուհի, 2 շոու բիզնեսի աստղ, 1 փորձագետ:

Առաջին տասնյակում էին՝
Զարուհի Փոստանջյանը, Մարի Յովանովիչը, Հրանուշ Հակոբյանը, Անահիտ Բախշյանը, Նարիա Զոհրաբյանը, Էմմին, Հասմիկ Պողոսյանը, Հիլարի Քլինթոնը, Նինո Բուրջանաձեն, Լիլիթ Մկրտչյանը:

Երկրորդ տասնյակում էին՝
Միշելին Քալմի-Ռեյը, Էլինա Դանիելյանը, Լարիսա Ալավերդյանը, Լիլիթ Գալստյանը, Կարինե Աճեմյանը, Նազիկ Ավդալյանը, Կարինե Ղազինյանը, Սիրուշոն, Քերոլայն Քոքսը, Կարինե Դանիելյանը:

***

Կանանց վերաբերող հրապարակումների թվի վրա որոշիչ ազդեցություն է ունեցել ոչ այնքան «կանանց միամսյակի» հետ կապված լրագրողների նախաձեռնությունները, որքան կանանց մասին տեղեկատվական առիթների առկայությունը:

***

Կանանց վերաբերյալ հրապարակումների 11%-ում կանայք հանդես են գալիս զոհի կարգավիճակով, այդ թվում՝ կեսից ավելի դեպքերում նրանք դժբախտ պատահարի զոհ են, 19%-ի դեպքում՝ ընտանեկան բռնության և 12%-ի՝ հասարակական վայրում բռնության:

Զեկույցին կարելի է ծանոթանալ այստեղ՝ http://www.unfpa.am/publications

Մարտահրավեր

Հայաստանը տարեկան կորցնում է մոտ 1400 ապագա մայր

Լույս է տեսել «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» զեկույցը:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության, Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի համագործակցությամբ՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մասնակցությամբ:

Զեկույցը պարունակում է թե՛ դրական և թե՛ մտահոգիչ եզրակացություններ: Մասնավորապես, հետազոտության մեջ ընդգրկված կանանց մեծ մասը երեխա է ունեցել բարենպաստ վերարտադրողական տարիքում՝ 19-35 տարեկանում, ինչը շատ կարևոր է առողջ մայրության համար: Խիստ դրական է նաև, որ հայաստանյան հասարակությունն արդեն ծնված երեխայի նկատմամբ, անկախ սեռից, ցուցաբերում է նույն հոգատարությունը:

Այդուհանդերձ, ապագա երեխայի հարցում հասարակությունը մեծապես նախապատվություն է տալիս տղա երեխային՝ վեց անգամ ավելի, քան աղջիկներին:

Հետազոտությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Հայաստանի մոտ 900.000 վերարտադրողական տարիքի կանանց 0,8%-ը վերջին 5 տարիների ընթացքում կատարել է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում: Իսկ դա նշանակում է, որ երկիրը յուրաքանչյուր տարի պոտենցիալ կորցնում է մոտ 1400 ապագա մայրեր:

Հիշեցնենք, որ պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ 1993-ից Հայաստանում նորածինների սեռերի հարաբերակցությունը կազմել է 110-120 տղա՝ 100 աղջկա դիմաց, մինչդեռ կենսաբանորեն ընդունված նորմալ հարաբերակցություն է համարվում 102-106 տղա՝ 100 աղջկա դիմաց:

Զեկույցին կարելի է ծանոթանալ այստեղ՝ http://www.unfpa.am/publications

Հրավիրում ենք՝ WomenNet.am

Դուք կարող եք կարդալ «Կինը և քաղաքականությունը» նաև համացանցում:

Սպասում ենք բոլորին www.WomenNet.am մեր նոր կայքում, որտեղ դուք հնարավորություն կունեք ոչ միայն ավելի մանրամասն և օպերատիվ տեղեկատվություն ստանալու, այլ նաև ձեր մեկնաբանությունները թողնելու և օն լայն քննարկումների մասնակցելու:

«Կողմ» եւ «դեմ»

Հավասարություն ապահովող օրինագիծն ընդունվեց ընդամենը երկու «դեմ»-ով

ՀՀ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի առաջին իսկ նիստում խորհրդարանն ընդունեց նախորդ նստաշրջանի վերջում քննարկված, բայց քվեարկության չդրված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի նախագիծը:

Օրինագիծն ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 79 կողմ, 2 դեմ և 2 ձեռնպահ ձայներով: Քվեարկությունների անհատական պատկերը ցույց տվեց, որ երկու «դեմ»-երը պատկանում էին Աժ նախկին նախագահ Տիգրան Թորոսյանին և ԲՀԿ խմբակցության պատգամավոր Էռնեստ Սողոմոնյանին: Վերջինս, ի դեպ, երբեք չի թաքցրել, որ առաջնորդվում է «Լսիր կնոջը և արա ճիշտ հակառակը» ասացվածքով, այս անգամ էլ գործընկեր տղամարդկանց կոչ արեց կանանց և տղամարդկանց իրավահավասարության մասին քննարկումներում ավելի զգույշ լինել:

Ինչպես հայտնի է, օրինագծի շուրջ խորհրդարանական լսումներ էին կազմակերպվել հունվարի 19-ին, և դրանց արդյունքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ շահագրգիռ ՀԿ-ների հնչեցրած տեսակետներն ու ստացված առաջարկները կքննարկվեն՝ լրամշակված փաստաթղթում արտացոլելու ակնկալիքով:

«Կարծում եմ, որ մինչև մյուս քառօրյա մենք կկարողանանք օրինագծի լրամշակված տարբերակն ունենալ»,- մեզ հետ զրույցում նշեց Աժ պատգամավոր, «Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանը՝ հույս հայտնելով, որ մինչև նախընտրական տրամադրություններով լիակատար տարվելը խորհրդարանը կհասցնի ընդունել այս օրինագիծը երկրորդ և երրորդ ընթերցմամբ:

No comment

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի նախագծի ներկայացման ընթացքում պատգամավոր Հովհաննես Մարգարյանը (ՕԵԿ), անդրադառնալով եկեղեցական պսակադրության ժամանակ ամուսինների «տեր եմ» և «հնազանդ եմ» խոստմանը, նշեց, որ եկեղեցում ասվածն ավելի ուժեղ նորմ է, քան եթե այն օրենքով սահմանվի.

- Մենք չենք կարող ներառել օրենսգրքում՝ որպես օրենքի նորմ, որ տեր կանգնեն, այսինքն՝ տղամարդիկ տեր կանգնեն իրենց ասածին, որ «տեր են կանանց», իսկ կանայք տեր կանգնեն «հնազանդ» բառին և իրենց հնազանդությունը դրսևորեն համատեղ կյանքի ընթացքում, որն ամենավառ վկայականն է կայուն ընտանիք ունենալու հարցում…

Նիստը վարող Աժ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովն (ՀՀԿ) էլ արձագանքեց.

- Շնորհակալություն, պրն Մարգարյան, կարծում եմ՝ բոլորս պետք է համաձայնենք այն դիտարկման հետ, որ ընտանիքի ամրությունը կայանում է նրանում, որ տղամարդիկ պետք է իրապես տեր լինեն իրենց ընտանիքին, իսկ կանայք՝ հնազանդ: Աստված տա, այդ բարոյականությունը և այդ բարոյագիտական նորմը մնա դարեդար:

Կանանց ձայնը

Թեժ քննարկում Աժ-ում.

խորհրդարանական լսումների ուշագրավ դրվագները

Հունվարի 19-ին Ազգային ժողովում տեղի ունեցան խորհրդարանական լսումներ՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրինագծի վերաբերյալ: Լսումներին մասնակցում էին պատգամավորներ, կառավարության անդամներ, մարդու իրավունքների պաշտպանը, հասարակական կազմակերպությունների և մի շարք միջազգային կառույցների ներկայացուցիչներ: Լսումների կազմակերպմանը աջակցություն ցուցաբերեց ՀՀ-ում Եվրոպական միության խորհրդատվական խումբը:

Օրինագիծը, ինչպես հայտնի է, արդեն իսկ քննարկվել էր առաջին ընթերցմամբ անցյալ տարվա դեկտեմբերին, սակայն քանի որ նախագծի շուրջ տարակարծությունները շատ էին, մարդու իրավունքների պաշտպանության (նախագահ՝ Արամ Սաֆարյան) և եվրոպական ինտեգրման հարցերի (նախագահ՝ Նաիրա Զոհրաբյան) մշտական հանձնաժողովների նախաձեռնությամբ որոշվեց խորհրդարանական լսումներ հրավիրել՝ հասարակական կազմակերպությունների նկատառումները և առաջարկները ստանալու ակնկալիքով:

Հիմնական զեկուցողները երեքն էին՝ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Ֆիլարետ Բերիկյանը, «Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանը, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Զեմմա Հասրաթյանը:

«Ծնչո՞ղ», թե՞ «շնչահեղձ» արված օրինագիծ

Չենք սխալվի, եթե ասենք, որ մեխանիզմների բացակայության մասին մտահոգությունը այն «հերթապահ» ռեպլիկների թվից է, որ հնչեցվում են Ազգային ժողովում քննարկվող գրեթե բոլոր օրենքների վերաբերյալ: Շատ դեպքերում այն հիշատակում են, երբ օրինագծի վերաբերյալ ավելի կոնկրետ ասելիք չի լինում, սակայն առկա է ելույթ ունենալու ցանկությունը: Գոյություն ունի նաև նման դեպքերի համար նախատեսված հերթապահ պատասխան, այն է՝ օրենքը շնչող օրգանիզմ է, ընդունենք, իրագործման ընթացքում պարզ կդառնա՝ ինչո՛ւ չի աշխատում, այլ կերպ ասած՝ չի շնչում, փոփոխություններ կանենք:

Թեև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի նախագծի շուրջ քննարկումը նույնպես ընթացավ այդ «հերթապահ» ճանապարհով, այնուամենայնիվ մեխանիզմների բացակայության մասին դիտարկումը որոշակի հիմքեր ուներ:

«Կառավարությունը սկզբնական տարբերակը «բմբլահան» է արել», «անատամ» մի նախագիծ է ներկայացրել, որն ավելի շատ դեկլարատիվ բնույթ է կրում, քան ունակ է գենդերային հավասարության խնդիրներ լուծել»,- այս մտահոգությունները լսումների ընթացքում հնչեցին տարբեր բանախոսների կողմից:

Թեմայի շուրջ հիմնական զեկուցող, աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Ֆիլարետ Բերիկյանը փորձ արեց ապացուցելու, որ կառավարությունն ընդամենը խմբագրական աշխատանք է կատարել՝ հստակեցնելով որոշակի դրույթներ, սակայն նրա դիտարկումները շատերին ոչ այնքան համոզիչ թվացին: Հարցի շուրջ թեժ քննարկում ծավալվեց:

«Քաղաքական կամքն առկա է, մնում են մեխանիզմները»

Հիշեցնենք, որ օրենքի վրա սկզբնական փուլում աշխատող փորձագիտական խմբում ընդգրկվել էին Աժ պատգամավորներ, Աժ և արդարադատության նախարարության իրավաբան մասնագետներ և ՀԿ սեկտորից գենդերային քաղաքականության գծով փորձագետներ: Խմբի ղեկավարն էր Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Զեմմա Հասրաթյանը: Աշխատանքային խմբի այս կազմը հնարավորություն տվեց լսումների ժամանակ հայտարարել, որ օրինագիծը կոնսենսուսի արդյունք է:

Կանանց կազմակերպությունների ներկայացուցիչները այս փաստը թեև չեն ժխտում՝ համարելով, որ խորհրդարան վերջապես հասած այս նախագիծը իրենց երկար տարիների ջանքերի արդյունք է, բայց միաժամանակ վերապահումներ ունեն կառավարության խմբագրած օրինակի առնչությամբ: Այսինքն՝ կոնսենսուսն առկա է գաղափարի շուրջ և ոչ թե օրինագծի ներկայիս տեքստի, որից խմբագրման ընթացքում առնվազն երկու գլուխ հանվել է, ընդ որում, հատկապես այդտեղ էին շարադրված մեխանիզմները և գենդերային անհավասարակշռությունը հաղթահարելու ժամանակավոր միջոցները:

«Ինձ համար ցավալի է, որ քննադատական խոսք հնչեց օրինագծի գործիքակազմի վերաբերյալ,– ասաց զեկուցող՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Զեմմա Հասրաթյանը՝ նշելով, որ հենց մեխանիզմների ներդրումն էր այն հիմնական սկզբունքը, որով առաջնորդվել է օրինագծի վրա աշխատող խումբը: Հիմնվելով մի շարք երկրների փորձի վրա՝ դա իրենց կարծես թե հաջողվել էր: Սակայն կառավարության ներկայացրած տարբերակում հատկապես մեխանիզմների հետ կապված կոնկրետ մոտեցումները բացակայում են:

«Մեր դիտարկմամբ՝ նախնական տեքստից հանվել են որոշ սկզբունքային մոտեցումներ: Մենք կփորձենք նորից ներկայացնել դրանք, այս անգամ՝ առաջարկների ձևով և հույս ունենք, որ Ազգային ժողովը կքննարկի և կվերականգնի այդ դրույթները»,- ասաց Զեմմա Հասրաթյանը՝ ընդգծելով, որ քաղաքական կամքը օրինագծի շուրջ անշուշտ առկա է, մնում են մեխանիզմները:

Անդրադառնալով մեխանիզմների խնդրին՝ Զեմմա Հասրաթյանը նշեց, որ գենդերային համամասնության ապահովման տեսանկյունից միջազգային պրակտիկան, որը մանրամասնորեն ուսումնասիրվել է օրինագծի մշակման ընթացքում, հետաքրքիր տարբերակներ է հուշում: Առավել արդյունավետ միջոց է քվոտաների սահմանումը ընտրովի մարմիններում, ինչն ապահովում է կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությունը:

«Այսօր պայքարում ենք, որ խորհրդարանում գենդերային համամասնությունը 30/70-ի հասցվի, այնինչ Եվրոպայի խորհուրդը վաղուց արդեն առաջարկել է անդամ պետություններին, որ այդ հարաբերակցությունը 40/60 դարձնեն: Կանայք Ազգային ժողովի պատգամավորների միայն 8,3 տոկոսն են կազմում: Ինչպե՞ս ենք պատրաստվում ժողովրդավարություն կառուցել, եթե քաղաքացիների ավելի քան կեսի ձայնը լսելի չէ: Անկախ Հայաստանի ողջ պատմության ընթացքում ոչ մի կին քաղաքապետ չենք ունեցել, այսօր էլ միայն մեկ կին քաղաքապետի տեղակալ ունենք: Խոսքն այստեղ բացարձակապես կանանց ունակությունների մասին չէ, տղամարդիկ ավանդույթի ուժով այդ պաշտոններին տիրացել են և չեն ցանկանում բաց թողնել: Այս պարագայում կանանց համար հավասար հնարավորություններ ապահովելու միակ գործուն մեխանիզմը քվոտավորումն է տարբեր բնագավառներում, որը և նախատեսված էր սույն օրենքով»,- ասաց Զեմմա Հասրաթյանն իր ելույթում:

Ֆիլարետ Բերիկյանի հիմնավորմամբ՝ կառավարությունը կտրականապես դեմ է ՏԻՄ համակարգում քվոտաների ներդրման առաջարկին, քանի որ այդ դրույթը հակասում է Սահմանադրությանը:

«Երբ մենք մտածում ենք, որ գենդերային հավասարության մասին օրենքով ընդհանրապես կարելի է լուծել բոլոր հարցերը, սա ծայրահեղ մոտեցում է: Բայց հստակ է, որ հասարակության զարգացման, ընդհանրապես՝ կարծրատիպերի դեմ պայքարով կարելի է հասնել արդյունքների, ու տվյալ օրենքը շատ ավելի քիչ է, քան առաջարկում է կառավարությունն իր գործունեության տրամաբանությամբ»,- հայտարարեց նա՝ նշելով, որ բոլոր կարգավորումները կարելի է տալ ենթաօրենսդրական ակտերով, քանի որ դրանք սույն օրենքի կարգավորման առարկա չեն:

«Ճիշտը առաջ տանելն է»

Օրինագծի համահեղինակ, «Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանի խոսքով՝ պատահական չէ, որ խոսելով հավասար հնարավորությունների մասին՝ մենք նախ հիշատակում ենք կանանց:

Մենք իրականում խնդիրներ ունենք հատկապես նրանց հնարավորություններն ապահովելու հարցում, քանի որ իշխանության բոլոր մակարդակներում պաշտոնները տղամարդկանց են տրվում, իսկ «սևագործ» աշխատանքը՝ կանանց: Մենք խնդիրներ ունենք կրթության բնագավառում, որտեղ միայն կանայք չպետք է լինեն, այլ նաև տղամարդիկ: Խնդիրներ կան ընտրական օրենսգրքի հետ կապված, մասնավորապես՝ այդ ո՞ր կինն այսօր կհամաձայնի առաջադրվել ու գնալ մեծամասնական ընտրապայքարի և այլն:

Վերհիշելով դեռևս 2005-ին իր հեղինակած օրինագիծը, որն այն ժամանակ Ազգային ժողովը նույնիսկ քննարկման չարժանացրեց, ավելին՝ նախորդ գումարման վեց կին պատգամավորներից միայն երեքն այդ նախագծին կողմ հանդես եկան, նա կարևորեց այն հանգամանքը, որ այսօրվա նախաձեռնությունը հասարակական կազմակերպությունների հետ միասին տարիներ շարունակ տարված պայքարի արդյունք է:

«Ես ինքս այս տարբերակից այդքան էլ գոհ չեմ, բազմաթիվ հոդվածներ, որ առարկայական էին ու մեխանիզմներ էին առաջարկում, ներկայիս քննարկվող նախագծից դուրս են մնացել, և մենք յոթ տարի սրա համար չէ, որ պայքարել ենք, այդուհանդերձ համարում եմ, որ ավելի ճիշտ կլինի ոչ թե հրաժարվել նրանից, այլ աջակցել այն լավացնելու համար, առաջ տանել՝ հնարավորինս մոտեցնելով այն տեսքին, որն իսկապես պետք է ունենա նման օրենքը, եթե, իհարկե, ձգտում ենք միջազգային փորձը կիրառելի դարձնել մեր երկրում»,- առաջարկեց նա՝ նշելով, որ «օրենքը շնչող մարմին է», և հնարավոր է նույնիսկ ընդունելուց հետո այն փոփոխել:

«Իսկ եթե այն «շնչահե՞ղձ» է արվում»,- լսումների մասնակիցների այս տարակուսանքին պատասխանելով՝ Բիշարյանը եզրափակեց. «Ինչ հնարավոր էր՝ արել ենք, եթե կարող եք՝ արե՛ք ավելին, մենք ձեր կողքին ենք»…

Տղամարդկանց ձայնը

«Հավասարությունը խորթ չէ մեր ազգային նկարագրին»

Լսումներին բացման խոսքով հանդես եկավ ԱԺ նախագահ Սամվել Նիկոյանը, որը կարևորեց օրենքը և նշեց, որ դրա ընդունումն ունի քաղաքական, իրավական, պատմական ու անգամ ազգային անվտանգության տեսանկյունից լուրջ հիմնավորումներ:

«Հայաստանում կանայք մեծամասնություն են կազմում, նրանք շատ գրագետ են, շատ գեղեցիկ, և չօգտագործել այդ հզորությունն ու հնարավորությունը՝ շռայլություն կլինի: Պետք է փորձենք գտնել այնպիսի մոտեցումներ, որ գենդերային իրավահավասարությունը գործուն մեխանիզմ դառնա: Խնդիրն այն է, որ Սահմանադրությամբ և օրենքներով հավասար իրավունքները տրված են, բայց կիրառման համար գործուն մեխանիզմներ չկան: Այս օրենքի ընդունումը շատ հարցերի պատասխան կտա»,- ասաց նա:

ԱԺ նախագահը բավականին լայն պատմական էքսկուրս կատարեց՝ նշելով, որ կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարությունը խորթ չէ մեր ազգային նկարագրին, այն կազմում է մեր մշակույթի բաղկացուցիչ մասը, և դրա վառ վկայությունն են հայ իրավունքի հուշարձանները: Նրա բնորոշմամբ՝ սա նշանակում է, որ հայ քաղաքական միտքը դարերի ընթացքում տվել է արժեքներ ողջ քաղաքակրթությանը, և այսօր այդ արժեքները համամարդկային քաղաքակրթությունը վերադարձնում է:

«Մենք դա պետք է ընկալենք հենց այդպես և ընդունենք, որովհետև դա մեր մոռացված հինն է»,- ասաց ԱԺ նախագահը:

Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահ Արամ Սաֆարյանն էլ լսումների բացման խոսքում հիշեցրեց, որ Հայաստանը մի շարք միջազգային փաստաթղթերի, այդ թվում՝ Եվրամիության Արևելյան գործընկերության շրջանակներում պարտավորություն ունի կարգավորելու իր երկրում այն հարաբերությունները, որոնք հանգեցրել են գենդերային անհավասարակշռության: Իսկ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը դեռ 2009-ի մայիսին ստորագրել է համապատասխան միջոցառումների ցանկը, որում նաև ընդգրկված էր այս օրենքի ընդունման մասին կետը:

Ինչո՞ւ էր այդքան մտահոգված օմբուդսմանը

Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը լսումների ժամանակ մի քանի մտահոգություն հայտնեց իր ելույթում:

Ո՞ւր են տղամարդ պատգամավորները...

Օմբուդսմանի առաջին մտահոգությունն այն էր, որ գենդերային հավասարության օրինագծի քննարկմանը ներկա են յոթ կին և ընդամենը երկու տղամարդ պատգամավոր: Կարեն Անդրեասյանը ենթադրեց, որ այդ գենդերային անհավասարությունը կարող է ունենալ երկու բացատրություն:

«Մեկը, որ խմբակցությունները նման կարևոր հարցը վստահել են կանանց, իսկ երկրորդ՝ կանայք են այսօր կարևորում գենդերային հավասարությունը»,- ասաց նա:

Քիչ անց լսումների մասնակիցների կողմից հնչեցվեց նաև երրորդ հնարավոր պատճառը. իսկ գուցե տղամարդիկ համաձայն չե՞ն օրինագծին, բայց գերադասում են չվիճել այդ հարցի շուրջ, քանի որ, ինչպես նշվեց, քաղաքական որոշում կա՝ այս օրենքն ընդունելու վերաբերյալ:

«Կնոջ մազը երկա՞ր է...», թե՞ «տղամարդը տան գլուխն է...»

Պաշտպանի երկրորդ մտահոգությունը կապված էր գենդերային կարծրատիպերի և գենդերային հավասարության հանդեպ հասարակությունում առկա որոշակի դիմակայության հետ:

«Մարդիկ կարծում են, որ Հայաստանում տղամարդկանց և կանանց միջև անհավասարության խնդիր չկա, և այդ խնդիրն արհեստականորեն մեր վզին է փաթաթվում արևմտյան երկրների կողմից, որոնք վատ են պատկերացնում մեր ավանդույթներն ու հասարակական կարգը»,- նշեց նա:

Անդրեասյանը կտրականապես համաձայն չէր նման հայտարարություններին՝ ընդգծելով, որ Հայաստանում գոյություն ունի նաև ընտանեկան բռնության խնդիրը, և, անկասկած, առկա են տղամարդկանց և կանանց անհավասար մրցակցային պայմաններ տարբեր բնագավառներում:

«Սակայն եթե բոլորը հասկանում են, որ բռնությունը վատ երևույթ է, ապա քչերն են գիտակցում այսօր տղամարդկանց և կանանց հավասար հնարավորությունների ապահովման կարևորությունը»,- ասաց նա:

Պատճառները, ըստ օմբուդսմանի, կարծրատիպերն են: «Կան կարծրատիպեր, որոնք արտահայտվում են ազգային ասացվածքներով՝ «Կնոջ մազը երկար է, խելքը՝ կարճ», «Լսիր կնոջն ու հակառակն արա» և այլն: Մինչև այդ ցավոտ և սխալ պատկերացումները մեր հասարակությունից չվերանան, տղամարդիկ և կանայք հավասար դիրքերում չեն լինի»,- համարում է նա:

ԱԺ նախագահ Սամվել Նիկոյանը, ով մինչ այդ պատմական էքսկուրսի միջոցով փորձում էր ապացուցել, որ գենդերային հավասարությունը մեր մտածելակերպի անբաժան մասն է, ընդհատելով բանախոսին՝ հիշեցրեց մեկ այլ ասացվածք, որը, իր կարծիքով, ավելի մոտ է իրականությանը, այն է՝ «Տղամարդը տան գլուխն է, կինը՝ վիզը, որ կողմը ուզենա, կթեքի գլուխը»...

«Օրենքը հստակ մեխանիզմներ չունի, բայց այն պետք է ընդունել»...

Փորձ անելով մի փոքր շտկել իր ելույթի հոռետեսական տպավորությունը՝ օմբուդսմանը նկատեց, որ օրինագիծը, իր կարծիքով, գուցե հռչակագրային բնույթ ունի և չի պարունակում խտրական դրսևորումները բացառող հստակ մեխանիզմներ, սակայն այն կարող է հասարակությունում կարծրատիպերի վերացմանը նպաստող ազդեցություն ունենալ, դրա համար էլ նա չէր ուզենա, որ վիժեցվեր այս օրենքը:

«Օրինագիծը չի պատասխանում բոլոր հարցերին, ավելի դեկլարատիվ բնույթ է կրում, այնուամենայնիվ, եթե մենք ճիշտ լրամշակենք և հետագայում ճիշտ կիրառենք գործնականում, ապա այն կարող է գենդերային հավասարության գործուն մեխանիզմ դառնալ»,- եզրափակեց Անդրեասյանը:

Ի դեպ, օմբուդսմանի գրասենյակում, ինչպես հայտնեց ինքը՝ Կարեն Անդրեասյանը, գրեթե լիակատար գենդերային հավասարություն է տիրում. աշխատակազմում 21 կին և 24 տղամարդ են, ընդ որում՝ ղեկավար պաշտոններում՝ 10 կին և 7 տղամարդ:

Թվում էր, թե այս պատկերը պետք է առավել քան լավատես դարձներ մարդու իրավունքների պաշտպանին գենդերային հավասարության հարցում, մինչդեռ նա, լսումների մասնակիցների կարծիքով, բավականին թերահավատ դիրքորոշում ցուցաբերեց իր ելույթում:

Նշեք առնվազն երեք պաշտոնյա, որոնք...

Նշեք առնվազն երեք պաշտոնյա, որոնք պատրաստ են հրապարակավ հայտարարելու, որ գենդերային հավասարության կողմնակից են: Այս հարցադրման շուրջ բավական հետաքրքիր քննարկում ծավալվեց լսումների ընթացքում:

«Տղամարդիկ պետք է պատրաստ լինեն զիջել իրենց տեղը կանանց, քանի որ կանայք ասելիք ունեն»,- մեջբերեց իր ելույթում վարչապետ Տիգրան Սարգսյանի խոսքը Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Կոտայքի մարզային կենտրոնի համադասող Անահիտ Աղոյանը՝ պատասխանելով իր իսկ հարցադրմանը երեք պաշտոնյայի մասին:

«Այս օրենքը պետական քաղաքականության մի մասն է, և բոլոր պետական կառույցները, այդ թվում և ԱԺ-ն, պետք է նպաստեն դրա ընդունմանը: Սակայն դա չի նշանակում, որ Հայաստանը միայն եվրոպական կառույցներին ընդառաջ գնալով է ուզում ինչ-որ քայլեր անել: Կարծում եմ՝ իրականությունն այլ է, և Հայաստանը՝ ի դեմս երկրի ղեկավարի, պարզ գիտակցում է, որ խնդիր ունի կանանց ներուժը զարգացման գործընթացին լիարժեք ներգրավելու առումով»,- նշեց Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Ջեմմա Հասրաթյանը:

Շարունակելով այս միտքը՝ Կանանց հանրապետական խորհրդի նախագահ Սիդա Թոփուզյանը նկատեց, որ քաղաքական կամքը գուցեև առկա է, բայց միայն վերևներում: «Նախագահից և վարչապետից բացի ես չեմ լսել որևէ պաշտոնյայի հրապարակային ելույթ, որում նա պաշտպաներ կանանց և տղամարդկանց հավասարության գաղափարը: Համենայն դեպս, իշխանության ստորին օղակներում չեմ հանդիպել մարդկանց, որոնք խոստովանեին, որ կանանց պետք է առաջ տանել՝ հավասարեցնելով տղամարդկանց հետ»,- ասաց նա:

Այնուամենայնիվ, քննարկումների ավարտին կանայք նկատեցին, որ գենդերային հավասարության գաղափարի ամրապնդման հարցում առաջընթաց կա. այդ մասին է վկայում նաև ԱԺ նախագահի մասնակցությունն ու ելույթը լսումներին:

Չմոռացան նաև շնորհակալություն հայտնել կառավարության ներկայացուցիչ Ֆիլարետ Բերիկյանին, որն օրինագիծն առաջ տանելու հետ մեկտեղ իրապես փորձում է վերափոխել իր անձնական դիրքորոշումը գենդերային հավասարության վերաբերյալ, ինչի ապացույցն է նրա կողմից հնչեցված հետևյալ միտքը.

«Գենդերային հավասարություն ասելով՝ Հայաստանում հիմնականում հասկանում են կանանց իրավունքների ոտնահարում, բայց երբ հասարակությունը սկսի ընկալել ոչ թե միայն կանանց, այլ ընդհանրապես սեռերի իրավունքների հավասարություն ասվածը, հաջողության կհասնենք: Ու այս օրենքը հենց այդ համատեքստում է հարկավոր հասկանալ»...

«Խորհրդարանն առավել ուժեղ կդառնա, եթե պատգամավոր կանանց թիվն աճի»

«Չնայած ես ընդամենը կես ամիս է, ինչ գտնվում եմ Հայաստանում, հասցրել եմ նկատել հայ կանանց կրթվածության և պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակը և վստահ եմ, որ խորհրդարանն առավել ուժեղ կդառնա, եթե պատգամավոր կանանց թիվն աճի: Ընտրությունների նախաշեմին ես կոչ եմ անում Ազգային ժողովի անդամներին և բոլոր կուսակցություններին, որ նրանք հաջորդ գումարմանը փորձեն ավելացնել խորհրդարանում կանանց ներկայությունը»,- նշեց իր ելույթում Հայաստանում Եվրահանձնաժողովի պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիստեան՝ մեջբերելով Միջխորհրդարանական միության տվյալները:

Դրանց համաձայն՝ խորհրդարանում կանանց ներկայացվածության մակարդակով Հայաստանը 9,2 տոկոս ցուցանիշով 188 երկրների շարքում գտնվում է 106-րդ տեղում, այն դեպքում, երբ ԵԱՀԿ երկրների միջին ցուցանիշը 22,3 տոկոս է:

Եվրահնտեգրման հարցերի հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանն իր հերթին վստահություն հայտնեց, որ բոլոր քաղաքական ուժերը շահագրգռվածություն կցուցաբերեն, որպեսզի իրենց նախընտրական ցուցակներում ավելի մեծ թվով կանանց ներառեն:

«Նորացված ընտրական օրենսգիրքը համամասնական ցուցակներում կանանց ներկայացվածության 5 տոկոսի աճ է ենթադրում, որի արդյունքում կանայք կկազմեն խորհրդարանի 20 տոկոսը: Չնայած այսօր կին պատգամավորները ընդամենը 11-ն են, բայց նրանք բոլորը շատ ակտիվ գործունեություն են ծավալում ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային կազմակերպություններում»,- եզրափակեց Զոհրաբյանը:

Բանավեճ

Սովետական կթվորուհիներից մինչև հեռավոր Ռուանդա

«Մենք ընդամենը 20 տարեկան երկիր ենք ու կարծրատիպերից ազատվելու գործընթացի մեջ ենք: Ու չի կարելի չնկատել, որ մենք դանդաղ, բայց գնում ենք առաջ», – «Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանի՝ խորհրդարանական լսումների ժամանակ ելույթում հնչած այս դիտարկմանն արձագանքելով՝ փոխնախարար Ֆիլարետ Բերիկյանը հանկարծ վերհիշեց խորհրդային ժամանակները.

«Տիկի՛ն Բիշարյան, չե՞ք կարծում, որ ներկայիս կարծրատիպերի մեղավորը 20 տարուց առաջ քվոտավորված Գերագույն խորհուրդը հանդիսացավ՝ կթվորուհի և տրակտորիստ պատգամավորներով հանդերձ»,- հայտարարեց Ֆիլարետ Բերիկյանը՝ նկատելով, որ այն ժամանակ էլ պատգամավոր դառնալու համար քվոտաներ էին իջեցվում վերևից:

Բիշարյանը հակադարձեց, որ կթվորուհիների ներգրավմամբ պետությունը մի շարք հարցեր էր լուծում, այդ թվում՝ գյուղական շրջաններում անգրագիտության հաղթահարման խնդիրը: Իսկ կոնկրետ իր օրինակով նշեց, որ ինքը 20 տարեկանում եղել է Լենինյան շրջանի պատգամավոր, բայց ոչ քվոտայով, այլ սեփական ակտիվության շնորհիվ:

«Պետք չէ հիմա համեմատություններ անել, ավելի ճիշտ կլինի երեսներս թեքենք դեպի Եվրոպա, որին ուզում ենք նմանվել: Ինչո՞ւ եք հետ գնում»,- նշեց Բիշարյանը:

Նման պահվածքը հիմք տվեց լսումների մասնակիցներին ենթադրելու, որ հենց ինքը՝ փոխնախարար Բերիկյանը, դեմ է կանանց և տղամարդկանց հավասարության գաղափարին: «Մենք հասկանում ենք, որ շատ դժվար է պաշտպանել մի օրինագիծ, որի գաղափարախոսության հետ դուք ներքուստ գուցեև համաձայն չեք»,- իր ելույթում նկատեց Կանանց հանրապետական խորհրդի նախագահ Սիդա Թոփուզյանը:

Եվրոպական և միջազգային կառույցների ներկայացուցիչներով լի խորհրդարանի դահլիճում առկա լարվածությունը մեղմելու նպատակով ԱԺ եվրահնտեգրման հարցերի հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանը հորդորեց չկառչել սովետական կթվորուհիներից, քանի որ այդ թեման լսումները բուն իմաստից կշեղի: Դրա փոխարեն նա անդրադարձավ Ռուանդայի խորհրդարանի օրինակին, որում քվոտավորման մեխանիզմը կիրառելու շնորհիվ այսօր պատգամավորների կեսից ավելին կանայք են, սակայն դա, իր խոսքով, ամենևին էլ չի նշանակում, թե այդ կանայք գիտեն, թե ի՞նչ պետք է անեն իրենց մանդատի հետ:

Իրականում Ռուանդայի օրինակը, այն էլ եվրահնտեգրման հարցերով զբաղվող հանձնաժողովի ղեկավարի կողմից, նույնքան անհաջող էր, որքան ավելի վաղ հնչած սովետական կթվորուհիներին անդրադարձը, քանզի յուրաքանչյուր երկիր տվյալ պատմական ժամանակահատվածում լուծում է իր առջև ծառացած կոնկրետ խնդիրները: Այս առումով մենք այսօր, ի տարբերություն Ռուանդայի, Եվրոպային հնտեգրվելու նպատակ ենք դնում: Եվ ուրեմն, ինչպես նշեց բանախոսներից մեկը, շրջվենք դեմքով դեպի Եվրոպա՝ թողնելով Ռուանդային զբաղվելու իր առավել քան բարդ խնդիրներով:

Ի դեպ

Օրենսդիր մարմնում կանանց ներկայացվածության ցուցանիշով երկրորդը աշխարհում Շվեդիան է, որը նույնպես հասել է այդ ցուցանիշին գենդերային քվոտավորման շնորհիվ, և որի բարեկեցության վերաբերյալ դժվար թե որևէ մեկի մոտ հարց առաջանա:

Եվս մեկ հետաքրքիր դիտարկում Ֆինլանդիայի օրինակով. գենդերային հավասարակշռություն պահպանելու համար Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարությունը նախկինում մասնագետների է աշխատանքի ընդունել 50/50 սեռային հարաբերակցությամբ, սակայն տարիներ անց ֆինները հրաժարվել են քվոտայից և պարզապես որոշել՝ ընդունել լավագույններին: Արդյունքում կանայք գերակշռել են՝ 60/40:

Լուսաբանեցին՝
Թագուհի Հովհաննիսյանը,
Էնգելա Մակարյանը

Երիտասարդական խորհրդարան

Մի քանի տարի հետո սեռերի անհավասարության մասին կարիք չի լինելո՞ւ խոսել...

Երիտասարդական խորհրդարանի անդամների հետ մեր զրույցից պարզ դարձավ, որ նրանք կողմ են կանանց և տղամարդկանց հավասարությանը, բայց դեմ են այն ապահովող օրինագծին...

Հիշեցնենք, որ երիտասարդական խորհրդարանը ստեղծվել է անցյալ տարվա մարտին ՀՀ ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանի նախաձեռնությամբ՝ որպես ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին կից խորհրդակցական հասարակական մարմին: 2011-ի հունիսի 1-ին երիտասարդական խորհրդարանի անդամների մանդատների հանձնման հանդիսավոր արարողությամբ այն սկսեց իր աշխատանքները:

Խորհրդարանի կազմի 30 տոկոսը իգական սեռի ներկայացուցիչներ են:

12 մշտական հանձնաժողովներից չորսը ղեկավարում են աղջիկները:

Դա դեռևս գենդերային հավասարություն չէ, բայց ի տարբերություն գործող ԱԺ-ի՝ կանանց այսպես կոչված «կրիտիկական զանգվածը» երիտասարդական խորհրդարանում ապահովված է:

Մեր զրուցակիցներն են.

Հարություն Ազգալդյանը՝ *երիտասարդական խորհրդարանի նախագահ, նաև արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ:*

Կառլեն Խաչատրյանը՝ *գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:*

Մարուսյա Անուշավանյանը՝ *գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:*

Կարինե Ոսկանյանը՝ *տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:*

Վլադիմիր Գևորգյանը՝ *տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՀԿ անդամ:*

«Գենդերային հավասարություն. արդյո՞ք դա մեզ պետք է»...

Վլադիմիր Գևորգյան.

- Ես, օրինակ՝ համոզված չեմ, որ մեզ պետք է գենդերային հավասարությունը:

Կարինե Ոսկանյան.

- Իհարկե պետք է: Այն հակառակ սեռին ուղղակի մարդ, հավասար քաղաքացի զգալու հնարավորություն է տալիս, և, ի վերջո, կյանքում շատ են լինում դժվարություններ, և տղամարդուն էլ է հարկավոր ամուր թիկունք, աջակից: Եթե տղամարդն իր կնոջ մեջ ուժ չի տեսնում, իսկ կինն էլ իրեն ցածր է զգում, ստորացված, ապա ընտանիքն ինքնին անառողջ կլինի:

Հարություն Ազգալդյան.

- Ես կարծում եմ՝ ինչքան շատ է խոսվում մի հարցի վերաբերյալ, այնքան հակառակ ազդեցությունն է լինում: Եկեք գործով ապացուցենք: Այսօր մեր խորհրդարանում 30%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են, չնայած նվազագույն շեմը 20%-ն էր: Առաջին լիագումար նիստից հետո պարզ դարձավ, որ երիտասարդական խորհրդարանում ներգրավված աղջիկները ոչ միայն ոչնչով չէին զիջում տղաներին, այլև առավել ակտիվ էին:

Մարուսյա Անուշավանյան.

- Մեր խորհրդարանում մենք գործով ու ակտիվությամբ կապացուցենք, որ կանայք հաստատ ուժեղ են ու կարող են քաղաքականությամբ զբաղվել:

«Տղամարդը պետք է շինարար լինի, կինը՝ խոհարար» մոտեցումը արդիական չէ»...

Կարինե Ոսկանյան.

- Կա հասարակության որոշ հատված, որտեղ դեռ իշխում են կարծրատիպերը: Սակայն դա որոշ և ոչ ստվար հատված է: Եթե այս հարցը բարձրացվեր մի քանի տարի առաջ, ապա պատկերն այլ կլիներ, իսկ մի քանի տարի հետո, համոզված եմ, այս խնդիրն այլևս բարձրաձայն հնչեցնելու անհրաժեշտություն չի լինի: Դրական միտումներ կան, քանի որ, օրինակ՝ երբ ասում եմ, որ ընդգրկված եմ երիտասարդական խորհրդարանում, քաղաքականությամբ եմ զբաղվում, երիտասարդների ու նաև միջին տարիքի մարդկանց զարմանքը չի առաջացնում: Քաղաքագետ եմ, և, իմանալով իմ մասնագիտական գիտելիքները, նրանք միայն ողջունում են, որ տեսական գիտելիքները կարող եմ պրակտիկայում գործադրել:

Կարծում եմ՝ ժամանակը բոլոր հարցերի պատասխանները կտա, և գենդերային խտրականությունը այլևս չի լինի: Ի վերջո, մենք ենք որոշում, թե մեր սրտին, հոգուն ի՞նչն է հարազատ, ինչո՞վ կարող ենք զբաղվել, ունե՞նք մեր առաքելությունը այս կյանքում, և այն կարծրատիպային մոտեցումները, թե տղամարդը պետք է շինարար լինի, կինը՝ խոհարար, աստիճանաբար ոչ արդիական են դառնում:

Կառլեն Խաչատրյան.

- Իրավական առումով մեր երկրում գենդերային անհավասարություն չկա: Այլ խնդիր է, թե ինչպե՞ս են այդ օրենքները կիրառվում, և հասարակությունն ինչպե՞ս է մոտենում այդ հարցին, կանայք որքանո՞վ են օգտվում իրենց իրավունքներից: Այստեղ է, որ դեռ խնդիրներ ունենք: Այն հանձնաժողովում, որ ես եմ ղեկավարում, կանանց ներգրավվածությունը շատ բարձր է՝ 40%, ակտիվության տեսանկյունից նույնպես:

«Փոփոխություն պետք է մտցնել ոչ թե օրենքներում, այլ գիտակցության մեջ»...

Կառլեն Խաչատրյան.

- Իրավունքի իրացման տեսանկյունից խնդիրներ կան, բայց դրանք կարծրատիպային ու հոգեբանական են: Այս առումով օրենքը («Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» – խմբ.) եթե ընդունվի էլ, դժվար ունենա հոգեբանական կարծրատիպ կոտրելու ուժ: Դիցուք՝ ո՞վ է արգելում կնոջն առաջադրվել երկրի նախագահ…

Կարինե Ոսկանյան.

- Կարծում եմ՝ այս խնդիրը օրենսդրական դաշտի հետ որևէ առնչություն չունի, որովհետև Սահմանադրությունում արդեն իսկ ամրագրված է, որ հավասար են բոլորը, հետևաբար, այստեղ փոփոխություն պետք է մտցնել ոչ թե օրենսդրական դաշտում, այլ գիտակցությունում: Օրինակ՝ կինը գիտի, որ ինքն առաջադրվելով որպես նախագահի թեկնածու՝ չի ստանա այնքան ձայներ, որ կարողանա նախագահ դառնալ, այսինքն՝ առաջադրումն անիմաստ է դառնում: Եվ այստեղ, իմ կարծիքով, հնարավորությունների սահմանափակում չկա: Դեմ կքվեարկեի այս նախագծին:

Ասենք՝ 1998-ին Լյուդմիլա Հարությունյանը դրեց իր թեկնածությունը, սակայն Կարեն Դեմիրճյանի առաջադրումից հետո հանեց: Այսինքն՝ այդ ցանկությունը կար նրա մեջ, և օրենսդրական առումով որևէ խոչընդոտ չնկատվեց, և հանելն էլ էր նրա անձնական որոշումը:

Հարություն Ազգալդյան.

- Մենք բոլորս էլ գիտակցում ենք, որ հասարակության մեջ ունենք կարծրատիպերով ապրող մարդկանց մի խումբ, ու օրենքի գոյությունը, որը, ըստ էության, պարտադրող բնույթ է ունենալու, միայն հակառակ ազդեցություն է ունենալու: Ինքս դեմ եմ այս օրենքի նախագծին, քանի որ կարծում եմ, որ օրենքը կարող է ոչ ճիշտ ձևով ընկալվել:

Վլադիմիր Գևորգյան.

- Այստեղ հոգեկերտվածքի խնդիր է: Եթե ուզում ենք որևէ բան փոխել, ապա պետք է դա անենք հասարակության հետ անընդհատ աշխատանքով և ոչ օրենքով: Օրենքներ շատ են ընդունվում, բայց ոչ բոլորն են գործում, եթե դա էլ ընդունվի և չգործի, իմաստ չունի: Ես համաձայն չեմ, որ միայն կանայք են ճնշված ու աշխատանք չունեն: Կրթության և առողջապահության բնագավառում ճնշող մեծամասնությունը կանայք են:

Կարծրատիպերը սերիալներում

«64 կանանց կերպարից միայն մեկը, ում ոչ ոք չի ծեծում, չի նվաստացնում...»

Կանանց ինչպիսի՞ կերպարներ, ընտանիքի ի՞նչ մոդելներ են մատուցում հեռուստադիտողին հայկական սերիալները. այս հարցերի պատասխանները փորձեցին պարզել Ռեգիոնալ հետազոտությունների և ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնների երիտասարդ անդամները: Հետազոտության նախնական արդյունքների շուրջ է մեր զրույցը նրանց հետ:

«Բոլորս ասում ենք, որ սերիալները վատն են, բայց մենք որոշեցինք այդ հարցին կոնկրետ փաստերով և թվերով պատասխանել»,- ասում է **Լիլիթ Գրիգորյանը,** ով մի խումբ երիտասարդների հետ նախաձեռնեց ամենամեծ լսարան ունեցող 4 սերիալների՝ «Աննա 2»-ի, «Անուրջների», «Դժվար ապրուստի», «Հրեշտակների դպրոցի» ուսումնասիրությունը: Դիտարկում էին պատահական ընտրանքի սկզբունքով:

- Առաջին ընդհանրությունը մեր դիտարկած սերիալներում այն էր, որ կանանց կերպարները բոլորը տխուր են, ընկճված, տանջված: Նույնիսկ այն տեսարաններում, երբ կինը պետք է զայրանա, նա, սովորաբար, լաց է լինում: Կյանքի ամեն իրավիճակի նրա արձագանքը լացն է: Լինում են դեպքեր, երբ, օրինակ, «Աննա» սերիալում կնոջ նկատմամբ չկա բռնություն որևէ մեկի կողմից, բայց նա, միևնույն է, զոհի դերում է հանդես գալիս՝ այս անգամ էլ կյանքի դժվարություններն են նրան «ծեծում»:

Գերիշխող իրավիճակը դեպրեսիան է, նշում է **Արմեն Սեյրանյանը:** Չորս սերիալներում էլ՝ տխուր և լացող դեմքեր, ծիծաղը որպես էմոցիա գրեթե բացակայում է, սովորական ժպիտն էլ կնոջ դեմքին հազվադեպ երևույթ է: Մի խոսքով՝ կյանքը տխուր է…

Դիտարկման արդյունքներով՝ բռնության տեսարանների քանակով առաջին հորիզոնականում «Հրեշտակների դպրոցն» է. 10 ֆիզիկական, 2 սեռական և 21 հոգեբանական բռնության դեպքեր, նշում է **Սուրեն Հովակիմյանը:**

- Մինչդեռ «Հրեշտակների դպրոցը» կարծես թե հասցեագրված է դեռահասներին: Իմ կարծիքով՝ այն իրականությանն այնքան էլ չի համապատասխանում. տասներորդցիներ, ողջ օրը դրսում թրև են գալիս, մեկը կռվում է գումարի համար, մյուսը…

Կանանց նկատմամբ բռնության տեսանկյունից աչքի է ընկնում «Դժվար ապրուստը»: Հատկապես մտահոգիչ է, որ այստեղ նույնիսկ դրական հերոսն է ծեծում իր կնոջը:

- Եթե բացասական հերոսի արարքը հասարակությունը որպես անընդունելի երևույթ է ընկալում, ապա դրական հերոսի նման պահվածքն ուղղակի լեգիտիմացնում է բռնությունը կնոջ նկատմամբ, այն էլ՝ այն միակ «արդարացմամբ», որ նա, իբր, չի սիրում իր կնոջը…

Երիտասարդները նշում են, որ զգացել են սերիալների ազդեցությունն անմիջապես իրենց վրա.

- Սկզբում, երբ նայում էինք առաջին երկու սերիաները, ապա ամեն մի գոռալը, ապտակը համարում էինք բռնություն և արագ նշումներ էինք կատարում մեր աղյուսակում, բայց մոտ 10 սերիա դիտելուց հետո արդեն ընտրողաբար էինք մոտենում, մեր աչքին սկսել էր այդ ամենը սովորական դառնալ, շատ դրվագներ մեզ համար այլևս բռնություն չէր ընկալվում: Այսինքն՝ մենք՝ որպես հետազոտողներ, զգացինք սերիալի բացասական ազդեցությունը նաև մեզ վրա, իսկ մարդիկ նայում են բոլոր սերիաները, հաճախ նաև՝ կրկնությունները…

Լիլիթ Բաղալյանին մտահոգում է այն փաստը, որ սերիալներում բացակայում է գոնե մեկ ամբողջական, նորմալ ընտանիքի մոդել. մի քանիսում ամուսիններն են դավաճանում, մեկ ընտանիքում դավաճանողի դերում կինն է, մյուսում՝ երկուսն էլ միաժամանակ: Եվս մեկ հետաքրքիր բացահայտում էին կատարել երիտասարդներն իրենց համար: Ի՞նչն է սերիալում դավաճանություն համարվում.

- Մի քանի սերիա դիտելիս նկատեցինք, որ, ի վերջո, մենք ինքներս երկակի ստանդարտներ ենք կիրառում: Տղամարդու դեպքում դավաճանություն ենք համարում միայն սեռական հարաբերությունները, մինչդեռ կնոջ դեպքում՝ նախկին ընկերոջ հետ հանդիպումը, նրա հետ մեկ անգամ մեքենա նստելը, սրճելը…Հետո հասկացանք, որ ինչ-որ տեղ ֆիլմի կարծրատիպային ենթատեքստն է մեզ թելադրում:

Քրիստինե Գասպարյանն ավելացնում է, որ այսօր մեր սերիալներում պակասում է նորմալ կնոջ կերպարը, որը կարիերայի մեջ հաջողություն ունենալուն զուգահեռ ունի նաև նորմալ, երջանիկ ընտանիք:

-Չկա սովորական մարդու կերպար, որ գնում է աշխատանքի, նրան ոչ ոք չի ծեծում, նվաստացնում… 64 կնոջ կերպար ենք դիտարկել, և միայն մեկն է, որ մեր նշված կերպարին կարծես թե փորձում է նմանվել: «Աննա» սերիալում ներկայացված էին 6 ղեկավար պաշտոնում աշխատող կանայք, որոնցից միայն մեկն է ամուսնացած, 3-ն ամուսնալուծված են, 2-ը՝ միայնակ և այլ հարաբերությունների մեջ: Իսկ «Հրեշտակների դպրոցում» միայն մեկ ղեկավար կին է ներկայացվում, ով նույնպես ամուսնալուծված է:

Շարունակելով թեման՝ Լիլիթ Բաղալյանը նշում է, որ կանանց կերպարները մեծ մասամբ սահմանափակված են ընտանիքով, նրանց խոսքն էլ միշտ երկրորդ պլանում է… Լիլիթ Գրիգորյանի դիտարկմամբ՝ «Դժվար ապրուստի» այդ գիծը կարմիր թելի պես է անցնում. բոլոր որոշումները կայացնում են տղամարդիկ, կանայք երբեք ոչինչ ինքնուրույն չեն որոշում, անգամ ամուսնանալու, իրենց ապրելու վայրի… և այլ հարցեր:

-Ֆիլմն ունի 16 կին հերոս, որոնցից ընդամենը մեկն է աշխատում, այն էլ՝ հրուշակեղենի փռում: Հաճախ պատճառաբանում են, թե ներկայացնում ենք այն, ինչ իրականում կա. այո՛, գուցե ղեկավար պաշտոններում կանայք իրոք Հայաստանում քիչ են, բայց որ խղճուկ են, այդպես չէ: Հակառակը՝ միգրացիայի պայմաններում հաճախ հենց կինն է իր վրա վերցնում ընտանիքի հոգսը և հաղթահարում բոլոր դժվարությունները:

- Մենք չենք ասում, որ պետք է ցույց տալ առանց խնդիրների ընտանիքներ, սակայն եթե բոլոր ընտանիքներում միմյանց դավաճանում են, ծեծում, նվաստացնում, դա արդեն մտորելու առիթ է տալիս՝ արդյոք այդպիսի՞ն է հայ հասարակությունը…

Էջը պատրաստեց Լիլիթ Քոչինյանը

Հավելվածը հրատարակվել է Կանանց համար գլոբալ հիմնադրամի աջակցությամբ

Global Fund for Women

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ promediagender_arm@yahoo.com